



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

թիւ 8.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

**ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՊՂՈՎՈՅ**

ԲԱՅՈՒՄ 1870 ՉԱՐԵՆ

ՆԻՍՏ ՊԹԵՐՈՐԳ

46 Հոկտեմբեր 1870



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ 3. ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ ՈՒԹԵՐ ՈՐԳ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1870.

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲՍԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ս . ԱՂԱՐԷԿԵԱՆ ԷՖ . (ՓՈՒԱՏԵՆԱՊԵՏ)

### ԽՆԴՐՈՑ ԿԱՐԳ

- 1<sup>o</sup> Կաթողիկոսութեանց խնդրոյն վերջին որոշում .
- 2<sup>o</sup> Վերաքննութիւն Ազգային Սահմանադրութեան .
- 3<sup>o</sup> Ժողովրդեան կողմանէ ներկայացեալ հանրագիրներ .
- 4<sup>o</sup> Ընթերցումն եւ հաստատութիւն ստանալիս կանոնաց .
- 5<sup>o</sup> Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց :

Ատենը բացվեցաւ ժամ 7 1/2 ին ի ներկայութեան 46 երեսփոխանաց : Ատենապետ էֆէնտին իմացուց թէ խնդիրը՝ կաթողիկոսաց ընտրութեան վաւերացման վրայ է , որոյ կեդրոնական իշխանութեան կողմանէ ըլլալիքը որոշված է : բայց Քնդ՝ ժողովէն ուղղակի , թէ՛ Խառն ժողովէն պիտի կատարվի այս վաւերացման գործողութիւնը : Ահա այս կետին մէջ սահմանափակեալ է այսօրվան խնդիրը : Եւ նախընթաց նիստէն խօսք ուղղ ու նշանակեալ երեսփոխանաց կարգով խօսք տրվեցաւ :

ՈՍԿԱՆ ՅԱԿՈԲ ԷՖ . — Նախընթաց նիստին խնդիրը հոն մնաց որ կաթողիկոսաց ընտրութեան վաւերացումը կեդրոնը պիտի ընէ , բայց որն միջոցաւ պիտի ընէ , եւ Յոսէն էֆէնտին առարկելով թէ՛ որոշ դադափար մը չ'ունի այս մասին՝ առաջարկեց որ այս նիստին մնայ խնդիրը :

Այս պարագան զարմանքս կը տանի , վասն զի բոլորակ մը կը դժենք առանց կեդրոնը ճանչելու : Ո՛ւր է ազգային գործոց անօրէնութեան կեդրոնը , ասոր վրայ է բուն խնդիրը , եւ դի-

ւանը կը պարտաւորի մեզի ճանաչել տարուղայն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ՔԲԻՍՏ . ԷՖ . — Խնդիրն այս է թէ՛ Սոց եւ Աղթամարաց կաթողիկոսաց ընտրութիւնը Քնդ՝ ժողովը պիտի վաւերացնէ թէ՛ Խառն ժողովը : Ըստ իս պէտք է նախ անոնց էութիւնը գիտնալ եւ ըստ այնմ որոշում ընել : Եթէ անոնք լոկ առաջնորդներ են , տարակուս չը կայ թէ՛ վաւերացումը Խառն ժողովին կը պատկանի , իսկ երբ Քնդ՝ ժողովը վաւերացնէ , ուրիշ հանգամանքներ ալ ունին անշուշտ : Ի՞նչ են այս հանգամանքները , շատեր՝ շատ ահուհներ տուին անոնց , առաջնորդապետ , հովուապետ , եւլն , անուանեցին . սակայն եւ ոչ մէկ անուան կրցաւ հաստատապէս որոշվիլ : Քանի որ խնդիրն ենթակային հանգամանքը չը գիտցըվեցաւ , Քնդ՝ ժողովը չը կրնար որոշել թէ՛ վաւերացումն իրեն վերապահելու է թէ՛ Խառն ժողովին տալու է :

ՔԲԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ ԲԱՐԹՈՂ . ԷՖ . — Քրիստոսաւոր էֆէնտիի յարուցած այս խնդիրն արդէն յուզված եւ իր լուծումն ընդունած է : Միայն

թէ վաւերացումն ինչ կը նշանակէ, այս կե-  
տին վրայ կը վարանիմ եւ կը կարծեմ թէ երբ  
վաւերացումը հաստատութիւն կը նշանակէ եւ  
գործադրութեան կարօտ պարագայ մ' ունի իր  
մէջը, քաղ. ժողովին գործն է. կը հետեւի  
ուրեմն որ կեղբորն իր գործադիր իշխանու-  
թեան յանձնելու է զայն:

S. ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍ. — Ստուգիւ չփոթ գա-  
զափար մ' ունեցանք կեղբորն վրայ:

Կեղբորն ըստ մեզ Ընդհ. ժողովն է, եթէ  
ասկէ դուրս ուրիշ մը կայ՝ բնաւ չիւ  
զայն:

Երբ Սոյ կը Աղթամարայ աթոռակալներն  
իր կաթողիկոս ճանաչվին, Ընդհ. ժողովոյ կը  
վերաբերի վաւերացումը, իսկ երբ իր ատաջ-  
նորդ նկատվին, այն ատեն Թառն ժողովին  
բաժինն է այդ, եւ ընտել այսքան յուզմանց  
եւ վիճաբանութեանց հարկ չը կայ:

ՓԱՓԱՋԵԱՆ ՍՏԵՓ ԷՖ. — Իողոր ազգը Սոյ եւ  
Աղթամարայ կաթողիկոսութեանց խնդիրը տար-  
բեր տեսութեամբ կ'ըմբռնէր ասկէ առաջ, տարբեր  
բաղձանքներ զը սածէր, սակայն այս ատեն ուրիշ  
դոյն մ' առաւ այսօր, որոյ շարժառիթը չ'եմ ուզեր  
հոս բացատրել: Կնչպէս Օսեան էֆէնտին ուրիշ  
առթիւ մը գիտեց երկու ամսօք յառաջ, աղ-  
ղին իղձն էր որ այդ կաթողիկոսաց էութիւնն  
իր հարկաւորութիւն մը նկատվի, եւ ընտրու-  
թիւնն Ընդհ. ժողովն ընէ: Նախորդ նիստին մէջ  
խնդրոյն ընտրութեան մասն այս հանրական  
փափաքին հակառակ լուծվեցաւ, եւ միայն  
վաւերացման մասն առ կախ մնաց:

Եթէ այդ աթոռակալներն առաջնորդ նկա-  
տեղն էր որ խնդիրը հոս բերաւ յանդեցուց,  
պէտք է գիտել որ անոնք եպիսկոպոս կը ձեռ-  
նադրեն, եւ մենք եպիսկոպոսական աստիճա-  
նին բարձրացող անձին ամեն պատիւ եւ շուք  
յօժարակամ կ'ընծայենք, մեր տներուն մէջ ա-  
մենէն բարձր տեղը եւ մեր սեղաններու գը-  
լուխը կը բաղմեցնենք: Երբ այդ կաթողիկոս-  
ները կեղբորնական իշխանութենէն անկախ եւ  
անջատեալ գիրքի մէջ մնան եւ ուզած մարդեր-  
նին եպիսկոպոս ձեռնադրեն, մանաւանդ որ  
ամենայն հաւանականութեամբ իսկ մը եպիսկո-  
պոսութեան թեկնածուներ գիտութենէ քա-  
ջալերված էջմիածինը պիտի թողուն եւ պիտ  
ու Աղթամար վազեն. երբ անարժան եպիսկո-  
պոսներ մեր շուրջը պատեն, ասոր հետեւան-  
քը չը պիտի ըլլայ արդեօք որ խտրութիւններ  
ձագին եւ բաժանումը տիրէ:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏ. ԷՖ. — Եկեղեցա-

կան համադումար ժողովոյ էութիւնն առաք-  
եալներէն եւ Նիկիոյ ժողովէն հաստատված է,  
եւ կը շարունակի ցարդ: Ժամանակաւ Ընդհ.  
ժողովն այս խնդիրն իր ձեռնհասութենէն բար-  
ձրը համարելով համադումար ժողովին յանձ-  
ներ եւ անոր վճռոյն ենթարկեր է զայն. սա-  
կայն մենք այսօր այդ վճիռը կը ջնջենք ա-  
ռանց գէթ խնդիրն անդամ մը համադումար  
ժողովոյն վերադարձնելու: Այս պարագաները  
նկատողութեան չ'առնելով մենք ոչ միայն մեր  
պարտուց դէմ մեղանշած կ'ըլլանք, այլ քանի  
որ կրօնական ազգ ենք, վասնզի մէջ կը գըտ-  
վինք նաեւ:

Եթէ իմ ձայնս արձագանք ալ չը գտնէ,  
հերիք է որ ես իմ պարտաւորութիւնս կատա-  
րեցի:

S. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՂԱՐԴԱՊԵՏ. — Պէտք է բա-  
ցատրել մեզ թէ որն է այն խնդիրն որ համա-  
դումար ժողովոյն անօրէնութեանը կարօտ կը  
համարվի:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏ. ԷՖ. — Նախապէս  
Քաղ. ժողովը համադումարին որոշումը փո-  
փոխելով բերաւ խնդիրն Ընդհ. ժողովոյն, եւ  
հոս սկսուաւ այլ ընդ այլոյ մեկնութիւններ առ-  
նու: Կը դարձանամ որ եկեղեցական սուրբ  
Հարք այս պարագային մէջ անտարբեր հան-  
դիսատես եղած կը լսեն, բայց մենք չ'ենք լը-  
սեր, այլ կը բողոքենք:

ՓԱՓԱՋԵԱՆ ՍՏԵՓ ԷՖ. — Միեւնոյն բո-  
ղոքին ձայնակից եմ:

ՄԱՋԼԸՄԵԱՆ ՅՈՎԱԷՓ ԷՖ. — Կը տեսնեմ  
որ անցեալ նիստի որոշման վրայ բողոքներ  
կ'ըլլան եւ խնդիրն իր բնական ճամբէն չեղե-  
լով անել լարիւրինթոսի մը կը տանի գմեղ:  
Եթէ գիււանն այսպիսի օտարտախ խօսքեր ըն-  
դունի եւ շեղումներու թող սայ, մենք եւս  
պատրաստ ենք այդ ընթացքը բռնելու: Հարց-  
վեցաւ թէ որն է կեղբորն: Ազգն իր իշխա-  
նութիւնն ունի եւ անոր ներկայացուցիչն է  
Երեսօրտանական ժողովը: Արոշումներ կ'ընէ  
նա, եւ անոնց գործադրութիւնը կը յանձնէ իր  
գործադիր մարմիններուն, որք են Արօնական  
եւ Քաղաքական խորհուրդները: Երբ Ընդհ. ժո-  
ղովը կաթողիկոսի ընտրութիւնը կ'որոշէ, Թառն  
խորհուրդը զայն կատարել տալու օրաշաօն ունի:

Տարակոյս չը կայ թէ Թառն խորհուրդը միայն  
իր գրից մէջ եւ իր օրաշաօնին բնութեամբը  
ձեռնհասութիւն ունի գիտնալով թէ այդ ընտ-  
րութիւնն օրինաց համաձայն է թէ ոչ, թէ  
ընտրեալը պահանջեալ հանդամանքներն ունի

թէ՛ չէ, եւ քանի որ Թառն խորհուրդը միայն կըր-  
նայ յատուկ ձեռնհասութեամբ այս պարագա-  
ներուն գիտակ եւ հասու ըլլալ, բնականօրէն  
իրեն կը պատկանի ընտրութեան վաւերացու-  
մը, որ ուրիշ իմաստ չ'ունի, եթէ ոչ՝ կատար-  
ված գործողութեան օրինական թէութիւններն  
ստուգել եւ հաւանիլ անոր: Իսկ երբ կ'ըսեն  
թէ՛ գործը իր սխալ կողմէն սխալված է, այն  
ատեն իրաւասութեան եւ կաթողիկոսական  
ընդհանուր յարաբերութեանց խնդիրը կ'ախար-  
կեն, որ ինչպէս ասկէ առաջ ատաջարկեցի,  
միայն եկեղեցական Ընդհ. ժողովի մը որոշե-  
լիք բանն է այդ, առանց որոյ ոչ կրնանք ընտ-  
րութեան մասնակցիլ եւ ոչ վաւերացումն ը-  
նել:

ՓԱՓԱՋԵԱՆ ՍՏԵՓ ԷՖ. — Կաթողիկո-  
սութեանց խնդիրը վեց կօթը նիստէ հետէ վի-  
ճաբանութեան ենթարկված է, երբ զառաջինն  
խօսք ուղեցի այս խնդիրն վրայ, կեղբորնաց-  
ման դազափար մը, զոր մեր ընդգիտմասունե-  
րը վերագրեցին մեզի, մտքէս իսկ չ'էր անց-  
ներ: Ես ընտրութեան եւ վաւերացման իղնզ-  
րոց ամենեւին կարեւորութիւն չ'եմ տար, եւ  
րեք զլուխ ունենալու վտանգն է գիտ վախցը-  
նողը:

Երբ ասկէ հինգ տարի առաջ եղած որոշ-  
մանց դիմեցի՝ անոնց մէջ տեսի որ կաթողիկո-  
սական հակառակութեանց դրութիւնը ջնջված  
է. տեսի որ Հայաստանեայց եկեղեցին երեք  
զլուխ եւ հետեւապէս երեք անջատեալ մար-  
մին ունենալու վտանգէն ազատված է, եւ այս  
կարեւոր պարագաները գիտել սուի ժողովին:  
Երբ այդ որոշումները կը ջնջվին այսօր, կը  
սնդեմ թէ՛ երեք զլուխ եւ երեք մարմին ու-  
նենալու վտանգը նորէն կ'երեւի: Երեսօրտա-  
նութիւնը եպիսկոպոսական խտրութիւնը հաստա-  
տելէ պէտք է հեռի կենայ, եւ իր որոշմանց  
միակ շարժառիթն ըլլայ մէկ ազգ եւ մէկ ե-  
կեղեցի ունենալու քաղաքականութիւնը: Զար-  
մանօք կը գիտեմ որ մեր ընդգիտմասունքը,  
լրագրապետներն իսկ լութեան վարագոյրի  
մը ներքեւ սքօղած են այս պարագաները, եւ  
ախնարի մը չ'են նետեր ատոնց վրայ, որպէս  
թէ անկարեւոր բաներ եղած ըլլային: Այս լը-  
նութիւնն իրաւունք կու տայ ինձ կատկածելու  
թէ թագուն նպատակ մը կայ այս խնդրոյն  
ներքեւ, նպատակ մը՝ որ ազգին մէջ բաժա-  
նու մներ կ'ուղէ իրադործել:

(Ատենապետ էֆէնտին այս պահուս ատենա-  
բանին խօսքն ընդմիջելով դիտեց թէ կարծե-  
կոց ազատութիւնը կ'ուղէ կաշկանդել եւ

խնդրէն կը շեղի, եւ հետեւապէս ի կարգ հը-  
րաւիրեց զինքը:)

ՓԱՓԱՋԵԱՆ ՍՏԵՓ ԷՖ. — Թէ եւ Ռուսիան  
էֆէնտին ալ իր խօսելու ատեն խնդրէն չեղե-  
ցաւ, բայց դիւանը թողտուութիւն ըրաւ, եւ  
հիմա նոյն իսկ Ռուսիան էֆէնտին ներշնչե-  
եալ ի կարգ կը հրաւիրէ զիս: Դառնալով բուն  
խնդրոյն կը կրկնեմ թէ՛ իմ խօսքս երեք զլուխ  
եւ երեք մարմին չ'ունենալու համար է, որու  
մեր ընդգիտմասունքը պատասխանելով կ'ը-  
սեն թէ այդ յարաբերութեանց խնդիր է, եւ  
ասոր կարգադրութիւնն Ընդհանուր եկեղեցա-  
կան ժողովոյ մը ձեռնհասութեան կը կարօտի:  
Կրնան զայս, որպէս զի անկարելի ըլլայ փա-  
փաքված նպատակին հասնիլ:

(Արշակ Յակոբ եւ Քիւրքճիպաշեան Յար-  
թող էֆէնտիններն առարկելով թէ՛ Փափազեան  
էֆէնտին խնդրէն կը շեղի, բողոքեցին անոր  
դէմ եւ դիւանին ներած թողտուութեանը:)

ՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափազեան էֆէնտին  
ազգափրական զգացմամբ մէկ խնդրէն միւսը  
կ'անցնի, եւ երբ դիւանէն ազգարարութիւն  
կ'ընդունի՝ ուրիշէն ներշնչութիւն կը կարծէ  
զայն: Դիւանն ատենական կանոններէ ներ-  
շնչեալ է միայն, եւ երբ Փափազեան էֆէն-  
տին լրագրապետաց լութեան դէմ բողոքներ  
կ'ուղղէ, կը խտորի խնդրէն եւ իրաւունք  
կու տայ զինքն ի կարգ հրաւիրելու:

ՏՕՔՅՕՐ ԻԻԹԻՒՅԵԱՆ ԷՖ. — Խնդրին սահմա-  
նին մէջ պարիակեալ մնալով խօսելու համար  
սա կ'ըսեմ որ՝ քանի որ կաթողիկոսաց ընտրու-  
թեան իրաւունքը թեմականաց արված է, վաւե-  
րացումն Ընդհ. ժողովին չը պատկանի: Կնչպէս  
Ռուսիան էֆէնտին ըսած ու հաստատած է  
թէ՛ թեմականք իրեւ առաջնորդ միայն կըր-  
նան զանի ընտրել. հետեւաբար Թառն խոր-  
հուրդին գործն է վաւերացումը:

Երբ Ընդհ. ժողովն այս խնդիրը կը յուղէ  
դեռ, թող համարձակութիւն տայ ինձ իրեն ը-  
սելու թէ իր ըրածը չը հասկնար:

ԱՂԱՋԱՆ ԱՍԻՄՅԱՆ ԷՖ. — Այս խնդ-  
րոյն սկզբնաւորութենէն ի վեր երկու անգամ  
խօսեցայ. ահա այս երրորդն ու վերջինն է:  
Երբ Ընդհ. ժողովը մեծագոյն մասամբ որոշեց  
որ ընտրութիւնը գաւառն ընէ, ալ խօսք չ'ու-  
նինք մենք ասոր վրայ, աղէկ կամ գէշ  
որոշված խնդիր մըն է եւ ամենուս ընդունե-  
լի: Վաւերացման վրայ երկարօրէն խօսելու  
չ'է, ո՛վ գիտէ տեսնենք թեմականները զայն  
մեզի կու տա՞ն. թէ որ Ընդհ. ժողովն իր վը-

րայ չ'առնու, որ մը Բ. Դուռը պիտի ընէ զայդ վաւերացումը:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏ . ԷՖ .** — Երեսօրհանաց զրկված հրաւիրապիւններուն մէջ առաջնորդապետի խօսք չը կայ, այլ կաթողիկոսի անուն արված է Սոյ եւ Աղթամարայ գահակալաց: Ըսել է մեր ընտրել տուածը կաթողիկոս է, մինչդեռ ոմանք առաջնորդ կ'անուանեն զանի: Այս երկու անուններուն մըն է շխտակը, կը կրկնեմ թէ որոշվելու է:

**S . ՄԵԼՔԻՍԵՆԴԵԿ ՎԱՐԴ .** — Որքան որ ընտրութիւնը գաւառին արված է, սակայն որոշված է նաեւ որ կանխաւ եւրեք ընտրելիներ կեղրանական իշխանութեան հաւանութեանը ներկայացնեն: Երբ կը պնդեն թէ վաւերացումը Խառն խորհուրդն ընէ, կարելոր է գիտնալ նաեւ թէ Սրբազան նախագահը եւ Խառն խորհուրդը յանձն կառնուն այդ վաւերացման պատասխանատուութիւնը եւ իրենց կը վերաբերի արդեօք այդ գործը, քանի որ չ'է թէ առաջնորդական այլ կաթողիկոսական ընտրելիներ պիտի ներկայանան իրենց, եւ Խառն խորհուրդն այս պարագային մէջ պաշտօն պիտի ստանձնէ ընտրելիներուն արժանիքը քնննելու, ընդունելու կամ մերժելու:

**ԱՐԵԱԿ ՅԱԿՈՔ ԷՖ .** — Խնդիրն ինքնին պարզ է եւ որոշ. գաւառը պիտի ընտրէ, իսկ Խառն խորհուրդը պիտի քննէ թէ իր տուած հրահանգին համեմատ ընտրութիւնը կատարված է թէ ոչ: Այս պարագային մէջ լնդհ. ժողովը որ որոշող իշխանութիւն մըն է եւ որ իր գործադիր մարմինն ունի, չը կրնար երբեք պաշտօն մ' ունենալ:

**ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ ՏԻԳ . ԷՖ .** — Կը փափաքէի որ վերստին խօսելու հարկին մէջ չը զըմարվէի այս խնդրոյն նկատմամբ, սակայն այնպէս չ'եղաւ. ուստի պիտի ջանամ ամեն առարկութեանց միահամուռ պատասխանել: Ռեբիշ անգամ մը, ըսեր էի թէ կարծիքներու ընդհարումէն լոյս կը ծագի. մեր վիճարանութենէն երեւան եկաւ այս լոյսը, այս ճըշմարտութիւնը. քրէտարկութեամբ ընդգրկեցինք զայն եւ ալ անօգուտ փորձ մըն է անկէ յետո գառնալու նկրարի:

Չարմանք են որ այնքան հեռատեսութիւն ընել կ'ուզենք, որ մինչեւ իսկ խնդրոյն հորիզոնին մերձակէան աչքերնուս առջեւ կ'անհետի:

Ընտրութեանց վաւերացումն լնդհանուր ժողովին կամ Խառն ժողովին ընելէն ինչ կը հետեւի:

Շատ մը ապագայ կարծիքներ կը դուշակեն. մեր ձեռքը չ'է ապագայն մեր արամաղրութեան ներքեւ առնուլ եւ անոր տիրել. ներկային տէրն ենք մենք, եւ սակայն ժողովն այդ ապագան ալ նկատողութեան առաւ իւր նախորդ նիստին մէջ:

Ոմանք կը հարցնեն թէ Սոյ եւ Աղթամարայ գահակալներն ինչ անուն ունին Այս հարցումն անգամ աւելորդ է. տարակոյս չը կայ թէ կաթողիկոս են անոնք, ինչպէս նաեւ լնդհ. ժողովոյ ատենագրութիւններն իսկ կ'ապացուցանեն. սակայն չ'են, այն գերազոյն հայրապետը որ էջմիածնայ գահին վրայ կը բազմի, որ ընդհանրական գլուխն է Հայաստանեայց եկեղեցւոյ, այլ մասնաւոր կաթողիկոսներ են իրենց յատուկ շրջանակի մը մէջ: Նորէն անոնց անուն բնտեղը յոռի չըջանի մը մէջ զեզերիլ է:

Հարցվեցաւ դարձեալ թէ ո՞րն է ազգային իշխանութեան կեղրոնը: Անշուշտ այդ կեղրոնը Երեսօրհանական ժողովն է որ Տաճկաստանի Հայերը կը ներկայացնէ եւ ի Պօլիս կը գումարվի: Սահմանադրութիւնը բոլոր գաւառներու մէջ լնդհանուր ժողովներ հաստատած է, բայց անոնք ազգին ընդհանրութիւնը չ'են, այլ գաւառիներ:

Սահմանադրութիւնն լնդհ. ժողովոյ ընելիք գործերը գործադիր մարմնոյ մը՝ կրօնական եւ Քաղաքական խորհուրդներու յանձներ է, եւ անոնց աջակից մանր ճիւղեր դասակարգեր է, բայց կարելի է նոր Սահմանադրութիւն մը այս մասին փոփոխութիւններ մտցնէ, սակայն լնդհ. ժողովը միշտ իշխանութեան կեղրոնն է, եւ իբր Սահմանադրական սկզբունք՝ անյեղլի է անոր այս բնութիւնը:

Այլատեան էֆէնտին կը հարցնէր թէ ինչու Քաղ. խորհուրդը վաւերացումը լնդհ. ժողովոյն կ'ուզէ ձգել: Կը վստահիմ որ իր հարցումն անկեղծ է, եւ կը փափաքիմ որ իմ պատասխանս ալ անկեղծօրէն ըմբռնէ: Այս առթիւ ցաւօք գիտել կու տամ իմ Մեծ. պաշտօնակցացս՝ որ ժողովոյն մէջ շատ անգամ վիճարանութիւններն իրենց նպատակէն տարբեր կերպով կ'ըմբռնվին, տարբեր գիտումներ կը նշանակվին ընդդիմախօսից, թէ եւ իրապէս եւ ոչ մէկ երեսփոխան մը թագուն նպատակ մը կրնայ ունենալ ազգին օգուտը խորհած ատեն: Աւստի իրաւունք ունիմ պահանջելու որ իրարու անկեղծութեան վրայ տարակոյս չը յարուցանենք, մասնաւոր որ առանց այս պայմանի անհնար կ'ըլլայ մեզի գործ տեսնել: Այս դի-

տօղութենէս ետքը կը դառնամ խնդրոյն. Քաղ. խորհուրդն այն պայմանաւ Ռուսիոնեան էֆէնտի առաջարկութեան յարեցաւ որ վաւերացումն լնդհ. ժողովն ընէ: Եւ ինչ է ասոր շարժառիթը. ներկայ գրից մէջ լնդհ. ժողովը կրնայ վստահ ըլլալ կրօնական եւ Քաղաքական խորհրդոց վրայ, սակայն փոփոխութիւններ կ'ըլլան, գէպեք կը ծնանին, որ այս վստահութիւնը կը դադրի: Եղան այնպիսի օրեր որ Երեսփոխանական ժողովը Վարչութեան վրայ անվստահութիւն յայտնեց, Ասիկայ ժխտելը ժամանակակից պատմութեան դէմ մեղանչել է, եւ ով որ կ'ըսէ թէ Սահմանադրութիւնը կրնայ այս բաներուն առաջին առնուլ, կը սխալի մեծապէս: Երբ այդ վաւերացումը Վարչութեան թողվի, թերեւս օր մը այդ պատենութիւնը միջոց մ'ըլլայ նպատակ մը յառաջ տանելու. ազգին կամաց հակառակ ընտրութիւն կատարվի եւ վաւերանայ, կամ լնդհանուր ժողովն անվստահութիւն մը յայտնէ այդ վաւերացման վրայ: Ստոյգ է որ արդի Վարչութիւնն իր զգացմանց ուղղութեան վրայ տարակոյս մը չ'ունի, եւ իւր ջանքերն ազգին օգուտը միայն կ'ենթադրեն, բայց նոյն իսկ կրնայ ըլլալ որ ներկայ Վարչութիւնն ալ օր մը լնդհ. ժողովոյ վստահութենէն ընկնի եւ մեղանչէ իր պարտուց դէմ: Ազգային վարչութիւնը չը կրնար այսպիսի պատասխանատուութիւն մը կամովին իւր վրայ առնուլ, եւ ահա ասոր համար կը պնդէ որ վաւերացումը ուղղակի լնդհ. ժողովէն կատարվի:

Երեսփոխաններէն ոմանք երբ յարաբերութեանց խնդրոյն վրայ կը պնդեն, միթէ կը փափաքին որ ընտրութենէն ետքի թողվի այդ խնդիրը, թէ ոչ՝ ըսել կ'ուզեն որ մինչեւ կաթողիկոսական յարաբերութեանց սահմանը չը գիտնան, կարծիք չը պիտի յայտնեն: Եթէ երկրորդ կարծիքն ունին, պէտք է որոշակի բացատրեն իրենց միտքը, եւ այս մասին իբր օրինակ յառաջ կը բերեմ Երուսաղէմայ Պատրիարքի ընտրութիւնը՝ որոյ պաշտօնը չը վաւերացաւ մինչեւ որ Երուսաղէմայ վանուց կանոնադիրը չ'ընդունեց:

**ՄԱՋԼՄԵԱՆ ՅՈՎՍԷփ ԷՖ .** — Երբ Խառն ժողովն ընտրութեան հրահանգները հաղորդէ թեմականաց, ի հարկէ ի վերջոյ անոնց գործադրութեան տեղեկագիրը պիտի ընդունի, եւ պիտի բաղդատէ գործողութիւնն ու արդիւնքը օրինաւորութեան պայմաններուն հետ: Խառն խորհուրդը պարտաւոր է օրէնքը գործադ-

րել, եւ ասոր համար սրչափ լնդհանուր ժողովն Ազգին նոյնքան եւ ինքը լնդհանուր ժողովին պատասխանատու է: Խառն խորհուրդն եթէ այս պատասխանատուութենէն խոյս կուտար, պէտք էր նախորդ նիստին մէջ յայտնէր զայն: Երկու առարկութիւն մէջ կը բերվի վաւերացումն լնդհանուր ժողովին ձգելու համար: Արվածեան էֆէնտի կ'ըսէ թէ ապագային մէջ ազգը իր վաւերացման իրաւունքը պիտի կորուսանէ այս ընթացքով եւ Բ. Դուռը պիտի կատարէ զայն: Իսկ Եուսուֆեան էֆէնտի կ'առարկէ թէ վարչութիւնը կըրնայ անվստահութեան վիճակի մէջ գտնվիլ, եւ իր վաւերացման պաշտօնը չարաչար գործածել. սակայն այս առարկութիւնները չ'են զօրեք որ վաւերացումը լնդհանուր ժողովին գայ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .** — Մեր բոլոր ընտրութիւնները առանց Բ. Դրան վաւերացմանը կատարեալ չ'են, մինչեւ որ Բ. Դուռը Փէրձն չըտայ, ընտրեալն իր պաշտօնը վարելու արտօնութիւն չ'ունենար:

**ՔԻՐԻՔՅԻՊԱՇԵԱՆ ԲԱՐԹՈՂ ԷՖ .** — Կը խընդրեմ որ վաւերացման նշանակութիւնը բացատրվի:

**ՍԸՎԱՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ .** — Ըսվեցաւ թէ ապագային համար չ'ենք կրնար գործել, մենք այսքան օրինաւորութեան հետամուտ եւ զանք որու նմանն եւ ոչ մէկ ազգի վրայ տեսնված է, եւ ասոր համար էր որ ապագային մէջ մեր վաւերացման իրաւունքը ձեռքէ պիտի ելնէ ըսի. ըստ իս վաւերացումը թէ լնդհանուր ժողովն ընէ եւ թէ Խառն խորհուրդը մի եւ նոյն բան է, եւ ինչ հարկ կայ խնդիրն այսքան հրկարաձգելու:

**ՓԱՓԱՋԵԱՆ ՍՏԵՓ . ԷՖ .** — Կ'առաջարկեմ որ քրէտի դրվի:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏ . ԷՖ .** — Ամենքն ալ համոզված են որ վաւերացումը Խառն խորհուրդն ընէ, միայն թէ երբ Սոյ եւ Աղթամարայ գահակալներն իբրեւ մասնաւոր կաթողիկոսներ ճանչվին, ինչպէս Եուսուֆեան էֆէնտին ըսաւ. ինչ ապահովութիւն ունի լնդհ. ժողովն որ օր մը անոնք զիրենք ընդհանրական կաթողիկոս չը հռչակեն եւ . . .

(Ատենապետ էֆէնտին ատենաբանին խօսքն ընդմիջելով յայտնեց թէ իր գիտողութիւնները յարաբերութեանց խնդիրը կ'ենթադրեն, եւ թէ այդ խնդիրն ի վերջոյ առանձին քրէտի պիտի դրվի):

**S . ՄԵԼՔԻՍԵՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ .** — Յայտնի է

որ սկիզբէն ի վեր Սոյ և Աղթամարայ դահակայներն իբր կաթողիկոս ներկայացան Քնդհ. ժողովին. եթէ առաջնորդներ ըլլային՝ անշուշտ տարբեր եզանակաւ այդ խնդիրը կը ներկայանար եւ ի քննին կ'առնուէր: Իսկ իմա այս ամենը մտածալով կ'առաջարկեն որ վաւերացումը խառն խորհուրդին ձգվի Եւուու Ֆեան էֆէնտի ասոր դէմ պատճառներ մէջ բերաւ եւ անցեալ պարագաներ յիշեց, իսկ Քնդհ. ժողովին ինչ պատճառ եւ նկատում կրնայ ունենալ այդ վաւերացումը որ պարզօրէն հասանութիւն կը նշանակէ, իւր վրայ չ'առնելու, կը խնդրեմ որ բացատրվի:

**ՌՈՒՍՏՆԵԱՆ ԷՖ.**— Իմ միտքս ըստ մեծի մասն լու բացատրեց Եւուու Ֆեան էֆ. թէ ակտոսոց Է. թէ կեղծական ու գաւառական Քնդհանոր ժողովոց նկատմամբ: Ինչպէս յետին ատենին մէջ ալ ըսի՝ վաւերացումը կեղծական մնալը բաւական է ըստ իս իրեր իրաւունք, ալ խնդիրը մեր ձեռքն է, Քնդհանոր ժողովին ու Աւարչութեան մէջ տեղ. օրէնսդրական ժողովն ու գործադիր խորհուրդը իրարու ձեռքէ պիտի յառիշտակին կամ իրաւախոս պիտի ըլլան մէջերէն: Այս մարմնոց որու ալ տրվի վաւերացման գործողութիւնը, անտարբեր է սկզբան նկատմամբ, չեւրիք է խնդիր որ իրողներն իբրեւ սկզբունք լուծեալ ընտրութիւնը գաւառին եւ վաւերացումը կեղծական վճռեալ ըլլայ. ինչպէս որ եւ եղաւ:

Չարմանքս այն կը տանի միայն՝ որ իս սկիզբէն կը հարցվի զեռ թէ ընտրեալն ինչ անուն պիտի կրէ. ոմանք առաջնորդ ըսին կամ առաջնորդապետ, ոմանք պատրիարք եւ ոմանք հայրապետ կամ կաթողիկոս կ'անուանեն զանի, այս անուանց որը պիտի ընդունինք: Թէ որ ես էի առաջարկողը, ես անանկ ընդարձակ ու ընդհանուր կերպով մը առի ու առաջարկեցի որ դու ուզածդ կրնաս ըսել, ուզած անունդ կըրնաս տալ անոր: Ես լոկ Ալեքիս բառը կը գնեմ ու առջեւը բաց կը թողում, դու հոն ինչ անուն կ'ուզես գրէ, ինչ բառ որ մաքէդ անցնի գիր, ինչ պաշտօնեայ կ'ուզես անուանէ, քու հոն դնելու բառդ իմ գրութեանս չը փոխեր, սկզբունքն անդրդուելի է եւ նոյնազօր ամեն տեսակ պաշտօնեայ համար: Ալեքիս բառը միայն պահէ որ չեւրիք է իրաւունքը որու ըլլալը միշտ յայտնելու, որը Քնդհ. ժողովն հաստատեց եւ իր վերջին վճռով վերջացուց այս խնդրը:

Այս կաթողիկոսութիւնը մեզի համար իսկ

եւ իսկ մասնաւոր առաջնորդութիւն մըն է՝ կաթողիկոսական առաջնորդութիւն մը, ինչպէս ունինք եւ պատրիարքական առաջնորդութիւններ, եպիսկոպոսական եւ նաեւ իսկ քահանայական առաջնորդութիւնը. եւ մեր Ազգային ժողովին համար այս պարզ եւ խիստական նկատումն էր որ չը կայ այլ ողջամիտ քաղաքականութիւն եւ ոչ ընդունելի նկատողութիւն:

Անկանոն է ուրեմն ասեմարանից սեանց ըրած անցեալին ակնարկութիւնքը, որք յետոյ գտնալու որոշ դիտարկութիւն կ'ենթադրեն եւ խնդիրը խառնաշփոթ վիճակի մը մէջ դնելով բոլորովին կը չեղին ու դուրս կը դառնան անոր սահմանէն, որով եւ արդարապէս կ'արժանանան զիւսնին կողմէն իրենց եղած ազդարարութեանցը. մինչդեռ խնդիրը խիստ պարզ է եւ վաւերացման իրաւունքին մէջ միայն սահմանափակեալ:

Աւարչութիւնը միայն խնդիր յարոց եւ ուղեց իմանալ թէ վաւերացումը կեղծական ըսելով արդեօք Քնդհանոր ժողովն ուղեցինք ըսել թէ Աւարչութեանն է՞ չո՞ւս անա տարբերեցաւ քիչ մը մեր կարծիքը Աւարչութեան կարծիքէն:

Երբ անցեալ նիստին մէջ վաւերացման իրաւունքին վրայ պատիւ ունեցայ խօսելու, այս կետը իբրեւ սկզբունք անտարբեր է ըսի, բայց իբրեւ գործադրութիւն՝ ամենեւին չը պահեցի իմ կարծիքս, եւ կարծեմ բաւականապէս բացատրեցի թէ այս գործողութիւնը բոլորովին կրնայ ընդունալ վարչութեան խառն խորհուրդին մէջ, ինչպէս ընդհանրապէս այն ամեն պաշտօնաւորաց ընտրութեան վաւերացումը որ կեղծական կը հարկաւորի կատարվիլու Քնդհանորին բերելը աւելորդ է, ամենեւին հարկ չը մնար: Քնդհանուրը՝ իբրեւ օրէնսդրական ժողով կ'որոշէ ու կը վճռէ միայն, գործադրութիւնը ընկանապէս վարչական խորհրդոց կը մնայ: Հուսկ ուրեմն գործնականապէս խօսելով նայինք ինչ պիտի ընէ ժողովը երբ այդ վաւերացումն իրեն բերվի. — իր կրօնական խորհուրդին պիտի ըսէ՝ դու որ ձեռնհասութիւն ունիս, ըսէ ինձի՝ այդ ընտրութիւնն ըստ կրօնի օրինաւորութեան պայմանները կ'ընծայէ թէ ոչ. եւ ասի՝ յետ քննութեան իր ֆէթուայ պիտի տայ. մի եւ նոյն հարցումը պիտի ուղղէ նաեւ իր քաղաքական խորհուրդին ընտրութեանը քաղաքական մասին համար, եւ պիտի ըսէ անոնց՝ եթէ օրինաւոր դո՛ւք դուք զայդ ընտրութիւնն իր ամեն պարագաներով, վաւերացուցէք ուրեմն

պէտք եղածը գործեցէք, հաստատութեան ֆէթուայ առէք Բարձրագոյն Գահէն, եւ այլն: Ասի արդեօք կեղծական վաւերացում ըսել է՞. կեղծական վարչութիւն ըսածնիս Քնդհանուր ժողովին ընտրած գործադիր խորհուրդները չ'են. ասոնց գործածը յանուն Քնդհ. ժողովին չ'է արդեօք որ ընդհանրական սնօրէնութեանց գործադրական մասն ասոնց յանձնած է համարաւորութեան պայմանով: Ա՞՞՞ կրնայ անջատել ընտրեալն իր ընտրողէն, համարաւորն իր համարաւորէն:

Ասոր կը պատասխանվի թէ Աւարչութիւնը կրնայ չը վստահիլ իր վրայ եւ զայդ պատասխանաւորութիւնը չ'ըստանանել. փոյթ չ'է կ'ըսեմ, երբ որ այդպիսի վիճակի մէջ գտվի, այն ատեն միայն դիմէ թող Քնդհ. ժողովին, ինչպէս եւ կրնայ ընել նաեւ իր ծանր դատած ամեն գործոց համար, բայց գործն իր ընկան ընթացքին մէջ պահելու համար՝ վաւերացման գործողութիւնը գործադիր իշխանութեան պահվի: Աւարչութիւնն ինքն իսկ պէտք է որ պահանջէր զայս պաշտօնը որ իրենն է եւ տեղի ունի կասկածելու թէ Քնդհ. ժողովին մնայ ըսողները արդեօք վստահութիւն չ'ունին Աւարչութեան վրայ որմէ զլանալ կ'ուզեն իր պաշտօնին այս մասը. մինչդեռ ասոր հակառակը կը տեսվի հոս:

Այսու ամենայնիւ արդեօք կը կարծէք թէ երբէք չը պիտի գայ այդ վաւերացումը Քնդհ. ժողովին. արդ ես երկու կողմին ալ կ'ըսեմ, թող գայ եւ թող չը գայ ըսողաց միանգամայն. այն, պիտի պատահի որ գայ երբեմն, եւ ցանկալի է որ երբէք կամ խիստ քիչ անգամ պատահի: Գիտէք երբ պիտի գայ. — երբ որ խառն խորհուրդի մէջ կրօնական եւ քաղաքական անհամաձայնութիւն պատահի եւ խնդիրը հոն անլուծանելի ըլլայ, Գիտէք մէյ մ' ալ երբ կրնայ գալ. — երբ ձեր կրօնական եւ քաղաքական խորհուրդները համաձայնին՝ բայց ոչ թէ վաւերացնելու ալ զընտրութիւնը բեկանելու համար. այս յետին պարագային մէջ երբ վարչութիւնը նախատեսէ թէ այն բեկումը կրնայ այլ եւ այլ խռովութեանց տեղի տալ զաւառին մէջ, իր պատասխանատուութիւնը ազգային ժողովին գերագոյն չեղինակութեամբը ծածկելու համար, ասոր որոշմանն ու վճռոյն պիտի դիմէ խոհեմաբար:

Աստի վարչութեան կ'ըսեմ՝ որովհետեւ իր ձեռքն է իր ուզած ատենը Քնդհ. ժողովին դիմել, թող աներկիւզ ըստանանէ իր պաշտօնը եթէ անկեղծ է իր սուսած բացատրութիւնը

այս մասին, ինչպէս հաստատեց. եւ իր պաշտօնին այս մասին բացառապէս խոյս տալու համար՝ ոչ պատասխանատուութեան ծանրութիւն եւ ոչ անխտանութեան կասկած չը պատճառէ թող ինքնին իր վրայ. ես վստահ եմ եւ չ'եմ խորվիր հաստատելով թէ այսպիսի կասկած յարուցող կողմ չը կայ այս ժողովիս մէջ:

Մինչեւ հոս ըսածներովս՝ վաւերացումը ժողովին թող գայ եւ թող չը գայ բող երկու ընդդիմախօս կարծիքները մէկ տեղ բերած համարելով, երբ որք կարծիք մ' ալ կայ, զայն ալ կ'ուզեմ հոս անոնց հետ միացնել եւ ամեն մտքեր միահաղոյն գոհացնել: Այս երբորդը վախ մ' ունի, ազգասիրական վախ մը որ ամեն ընդդիմախօս կարծիք ունեցան եւ ունին խնդրին բացված օրէն. այն է՝ պաշտօնակալութեան անբարեկարգ գործածութիւն, իշխանութեան զեղծում, կը վախնան վերջապէս թէ այդ կաթողիկոս առաջնորդին վաւերացումը Քնդհ. ժողովին ուղղակի չըլլալով՝ կրնայ զատ զլուս քաշել եւ եկեղեցոյ բաժանմանց տեղի տալ, կամ զեղծումներ ընելու ըստ հաճոյից ձեռնադրութիւններ ընելու ասոնց ժողովրդեան պիտոյքը նկատելու եւ ասոնց ազգային Պատրիարքարանի որոշմանց անտալութ. եւ այս անտեղութեանց առաջըլ յարաբերութեանց կանոններով անելու համար՝ վախաք յայտնեցին քանիցս անգամ որ նախ յարաբերութիւնքն որոշվին եւ յետոյ ընտրութեան ու վաւերացման խնդիրները. եւ այս վախով է որ ընտրութեան իրաւունքին ալ դէմ խօսեցան եւ կ'ուզեն խօսիլ վաւերացման ալ դէմ. բայց այս իրաւունքները այսօր ճշդեալ տեսնելով ալ բացայայտ հրատարակեցին իրենց վախը, եւ ընտրութեան ու վաւերացման իրաւունքներուն վրայ անտարբեր ըլլալին բացորոշ եւ անկեղծաբար խոստովանեցան:

Իրաւունք ունին վախերնուն մէջ, եւ յարաբերութեանց հարկաւորութիւնը անուրանալի է, Այդ վախը, մենք շատուց՝ եթէ ոչ աւելի՞ գոնէ անոնց չափ ունեցանք Սահմանագրութեան վերաքննութեանը ձեռք դարկած օրութեան վերաքննութեան մէջ Ցնտեասկան եւ Յարաբերական տեսչութեանց վերաբերեալ յօդուածները կը վկայեն թէ այդ կետը որ աստիճան մեր ուշադրութիւնը գրաւած է, եւ զանոնք ուշի ուշով ընթերցողները կը տեսնեն թէ՛ այդ մասին ինչ բարեկարգութեան հարուստ բեղմունք կան սերմնափակեալ նոյն

յօդուածոց մէջ : Ազգային ժողովին եւ Վարչութեան կը մնայ զանոնք անտի հանել ի լոյս, բողոքելու ու բարգաւաճել :

Հոս կ'ըզեմ ակնարկ մը տալ այն դատաքննութեանց որք մանաւանդ այս ժողովէս դուրս ալ կ'ըլլան եւ ժողովին ընթացքը կ'ը ստորանեն՝ զանի սխալած հրատարակելով իր որոշմանը մէջ, այնու թէ՛ յարաբերութեանց կետէն պէտք էր սկսիլ իր որոշումը եւ ոչ թէ ընտրութեան իրաւունքէն, յարաբերութիւնք՝ պատճառ, եւ ընտրութեան իրաւունք՝ անոր հետեւանք նկատելով, մինչդեռ ճիշդ ասոր ներհանն է Ազգային ժողովին համար որ երկու ուսուցան ալ ինք պիտի ընէ : Թող ներքին ինձ լսել աստ հրատարակաւ այն մանրակրկիտ խուզարկուած թէ խոչորապէս կը սխալին իրենք այս մասին : Ընդհ. ժողովը ոչ իր սկզբնայն մէջ սխալած է եւ ոչ իր որոշման մէջ : Իր եւ է յարաբերութիւն արգասիք է իրաւունքի մը եւ հետեւանք պարտեաց . ծուռ է միշտ այն յարաբերութիւնը որ իրաւանց ու պարտեաց փոխադարձ հարկաւորութենէն չ'է ծագած եւ անոնց վրայ չ'է չափված . ուստի նախ իրաւունքը պէտք է որոշել եւ յետոյ յարաբերութիւնքն անոր համաձայնել : Ըստ ըսկողրան այսպէս պէտք էր ընթանալ եւ այս ընդհանրան ընթացքը բռնեցինք . ուստի աւելի խելամտաբար պիտի կարենանք որոշել յարաբերութեանց զանազան կետերը :

Եթէ վախ մը կայ, անի որոշելի կետերուն առաջ կամ ետ ըլլալուն մէջ չ'է, այլ գործադրութեան մէջ կրնայ ըլլալ . որոշելն ուրիշ է գործադրելն ուրիշ . եւ ես դառնալով մեր մէջ այսօր այդ վախը կրօնաց կ'ըսեմ՝ թող հանդարտ ըլլան եւ ապահով, ժամանակը չ'է անցած այդ վախին առջեւն առնելու : Անցեալ նիստին ընտրութեան իրաւունքը որոշեցիք, արդեօք միւսօրը կաթողիկոսն ընտրվեցաւ . այսօր վաւերացման իրաւունքը պիտի որոշէք, արդեօք վաղը պիտի ներկայանայ վաւերացման անի որ դեռ չ'է իսկ ընտրեալ . — ոչ, ձեր հրահանգին կ'ըստանան այս գործողութիւնքը : Արդ՝ կ'առաջարկեմ որոշեցէք այսօր անկասկած վաւերացման կետը, եւ անմիջապէս անցէք յարաբերութեանց կետերուն, զանոնք ալ որոշեցէք, ընթացեցէք . եւ այս ամեն կետերը որոշելէն ետքը ձեռք զարկէք գործադրութեան, ինչպէս ըրիք Երուսաղէմայ Պատրիարքին համար : Կաթողիկոսարանի հաստատային կամ կաղմական կանոնադրութիւն մը պատրաստեցէք, ա-

նով կաթողիկոսին պարտքն ու յարաբերութիւնքը կանոնի տակ առէք . այն կանոններուն խմբագրութեան եւ որոշմանը պահեցէք վախկենիդ ու կասկածներնիդ, հոն փարատեցէք զանոնք, եւ զանի տուէք պայման ընտրելութեան կաթողիկոսացուն ինչ կերպով որ հաստատ տրված կը համարիք . ասանկով դուք ալ ազատեցէք, հասարակութիւնն ալ ազատի այս խնդիրներէն որ տարապայման երկարած զեցան :

Ուստի ամփոփելով կ'առաջարկեմ՝ նախ որոշելնք եւ ապա գործադրելնք . եւ այս որոշելի վերջին կետին համար՝ որ յարաբերութեանց խնդիրն է . կ'առաջարկեմ որ այսօրվոնէ յանձնելի Վարչութեան կամ յատուկ մասնախումբի մը, որ յարաբերութեանց ծրագիրը պատրաստէ հանդերձ կաթողիկոսարանի հաստատային կանոնադրութիւնովը եւ Կիլիկիոյ գաւառին պահանջած բարեկարգութեան տրուող նորութիւններովը եւ զանի քիչ օրէն ներկայացնէ Ազգային ժողովին քննութեանը :

**ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ.** — Ընդհ. ժողովը Սոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութեանց նկատմամբ եղած վիճարանութիւնները դադարեցուցնելու անոր արդիւնքէն չորս առաջարկութիւն երեւան ելաւ : Առաջինը՝ Ս. Պատրիարքին առաջարկութիւնն էր որ ի վերջոյ ես առաւ . երկրորդը՝ Ռուսինեան էֆէնտիինն էր որ քրէի դրվելով ընդունվեցաւ . երրորդը՝ Քաղ. ժողովինն էր որ ջնջվեցաւ . իսկ չորրորդը իմն էր, որու եկած էր կարգը եւ որ մէջ խաղաց : Վաւերացումը կեդրոնինն է ըսվեցաւ, իսկ հիմա կը հարցվի թէ ո՞րն է կեդրոնը : Այդ խնդիրը յարուցեց ինչպէս տրամադրած եւ որո՞ւ յանձնած է վաւերացման եւ գործադրական ամեն պաշտօնները : Երբ կ'ընդունվի ու կը հռչակվի թէ ընտրութեան իրաւունքը գաւառին յատուկ է, անտարակոյս վարչութեան կը պատկանի վաւերացումն ալ, բայց հիմա այդ վաւերացման գործն իբր խնդիր մէջ կը բերվի, որպէս թէ Սահմանադրութիւնը բացատրած չ'ըլլար զայն : (Հոս ատենարանը միջանկեալ կերպով բողոք կը բանայ ատենադրութեանց չը կարգացվելուն համար եւ իր խօսից թելը ձեռք կ'առնու կրկին) :

Վաւերացում կը նշանակէ քննել թէ ընտրութիւնը համաձայն է օրինաց : Ընդհ. ժողովը թէ եւ ազգին ամենէն բարձր ատենան է, բայց այդ քննութիւնը կարելի չ'է հոս ընել կարելի

չէ որ այս ժողովն իւր հարիւր անդամներովն այդ փորձը կատարէ :

Այս ամեն պարագաներու առջեւ հարկ կը տեսնեմ կրկին որ առաջարկութիւնս քրէի դրվի, ինչպէս նաեւ Քրիստոսաւոր էֆէնտին ալ վաւերացման վրայ խօսված ատեն զիտեց որ խնդիրը գործադրութեան վիճակի մէջ դրվելու համար, համազումար ժողովոյ վերադարձնել պէտք է որ անգամ մը թ ջնին առնու զայն իր պարագաներովը . իբր բացատրութիւն իմ առաջարկութեանս կը յարեմ թէ՛ վաւերացումը Խառն խորհրդոյ չըջանէն հանելով եւ օրէնքին տրամադրած ընդհանուր եղանակէն խոտորելով զայն Ընդհանուր ժողովոյ մէջ փոխադրելու քաղաքական հարկ մը չ'երեւիր, իսկ եթէ կրօնական հարկ մը կայ՝ ինչպէս կ'ըսեն Վ. հ. կաթողիկոսն ալ այս մտօք կոնդակ մը դրկած է, պէտք է ուրեմն որ խնդիրը համազումար ժողովին յանձնվի որ նկատողութեան առնու խնդրոյն ամեն կետերը, եւ իր քննութեան արդիւնքը կատարեալ տեղեկագրով մը հաղորդէ Ընդհ. ժողովին, եւ ահա այն ատեն կրնայ քրէի դրվիլ . քանի որ առաջարկութեանց մէկն ընդունված է՝ իրաց բնական հարկը կը պահանջէ որ առանց ուրիշ խնդիրներ յուղվելու՝ իմ առաջարկութիւնս անմիջապէս քրէի դրվի :

**ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.** — Այգատեան էֆէնտին կը կարծէ թէ այս վաւերացման առաջարկութիւնը Քաղաքական խորհուրդին կողմէն կու գայ բայց երբ կը հաւանի թէ առաջին առաջարկութիւնն իմն էր, այն ատեն պէտք է ըմբռնէ թէ այս ալ իմ առաջարկութեանս յարակից երկրորդ մասն էր՝ որ է վաւերացման մասը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Վաւերացման խնդիրը պարզված ըլլալով քրէի կը դնեմ :

**ՔՐԻՍՏՈՍՏՈՐ ԷՖ.** — Ռուսինեան էֆէնտին ըսածներուն վրայ եւ անոր տուած բոլոր բացատրութիւններովը հանդերձ կը խնդրենք քրէարկութիւնը :

(Ատենապետ էֆէնտին դարձեալ կը տրամադրվի քրէի դնելու, սակայն Այգատեան էֆէնտին ձայնը բարձրացնելով բողոք կը բռնայ եւ իր առաջարկութիւնը կը խնդրէ որ քրէի դրվի) :

**ՍԱՀԱԿ ԱՊՐՈ ԷՖ.** — Կը ցաւիմ որ երեսփոխանական ժողովը կը թըշնամանվի :

**ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ.** — Կը բողոքեմ դիւանին դէմ որ չ'ուզեր ատենական կանոնները յարգել :

(Այս միջոցիս Սրբազան նախագահը արդէն

ժողովն մեկնած ըլլալով, կէս ժամ հանդիսատաս ժողովն ու այնուհետեւ ատենը բացվեցաւ կրկին) :

**ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Բաւական ատենն հետէ կը լսեմ եւ թերեւս նրեւփոխանութիւնն ու ժողովուրդը կանխած յարուցանեն այս յամբովեանս վրայ : Այո, մեծ վիշտերը շատ անգամ մարդուն լեզուն կը կաշկանդեն եւ կը պրկեն, եւ վշտակրութիւնն ամենէն աւելի իմ բաժինս պէտք է ըլլայ : Հոս նստել եմ ձեր մէջ, բայց ո՞ գիտէ թէ իմ երեսակալութիւնս ուր է գնացեր, ո՞ գիտէ թէ որ գաւառներու մէջ կը գեղերիմ մտովի, ուր չարչարեալ ժողովուրդներ, անոք մանկիկներ, վշտահար հարսեր ու փեսաներ կը ներկային աչքիս, եւ ակնկառոյց մենէ դօրավիդն կը խնդրեն : Մենք հոս անդու կը վիճարանինք եւ մանաւանդ անոնք որ ամենէն աւելի հրատարակային թերթերու մէջ, եւ առանձին հրատարակութիւններով ամենէն աւելի կը բամբասեն մեր նախնիք թէ՛ ընդունայն վիճարաններ եւ ազգը հատուածներու բամբեր են . բայց այդ բամբասանքն ընօղները այսօր մեր նախնիքներէն վար մնացած չ'ունին : Վիճարանութիւնը հարկաւորութիւն մըն է այս ժողովին բնութեանը հետք, բայց պէտք է եղանակ մը եւ սահման մը ունենայ այն, որպէս զի երբ մէկը աւետարանին չափ մեկին ճշմարտութիւն մէջ բերէ, ընդդիմաբանն անոր դէմ ալ առարկութիւն մը չը յարուցնէ : Այս սահմանը գնելու միակ ճամբայ մը կը գտնեմ, այն է խնդիրը պարզ աչքով նկատել եւ խորամանկութեամբ անոր մէջ չը սուղիլ : Գործը հոն եկաւ հասաւ որ ընտրութիւնը գաւառը եւ վաւերացումը կեդրոնն ընեն, իմ համոզմանս հակառակ էր այս, զի քաջ գիտէի թէ թեմականաց եւ Ընդհ. ժողովին ընտրութեան մէջ ինչ տարբերութիւն կայ, եւ սակայն ուրիշներուն կարծեացը համակերպեցայ եւ գաւառին ընտրութեանը ձեռամբարձ քրէ տուի : Անցեալ նիստին մէջ քսօղներ եղան թէ ես կարծիքներս կը փոխեմ շատ անգամ . ճշմարիտ է այս . վասն զի իմ դիրքիս մէջ իմ պարտքս է կարծիք փոփոխել ազգային խնդրոց լուծման համար : Այո, համակերպեցայ եւ այս համակերպութիւնը իմ պարտքս էր եւ ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ « Եղէ ընդ ամենեւին ամենայն, զի դամենեւին չահեցայց » : Իսկ երբ հիմայ խնդիրը վաւերացման կու գայ կը յանգի, կը տեսնեմ որ տեսակ մը բռնական ճիղեր կը թափվին որ

վաւերացումը վարչութեան եւ պարտաւորութիւնները իր անձնաւորին : Ասիկայ ծանր է եւ մեծ դժուարութիւններ ունի իր մէջը . թէ եւ Ռուսիոնեան էֆէնտին կ'ըսէ որ վարչութիւնն ի հարկին ընդէ . ժողովին կրնայ զիմել եւ զանոնք լուծել տալ : Վաւերացման մէջ ոչ միայն հաւանութիւնն այլ կէս մ'ալ ընտրութիւն կայ, աղէկը գէշը զատելու խնդիր կայ որոյ հետեւութիւնները նախատեսելով կ'ուզեմ որ վաւերացումն ընդէ . ժողովն ընէ :

Այս է իմ կարծիքս որ անտիտիտն պիտի մնայ , եւ եթէ այսօր այս երկու կաթողիկոսութեանց խնդիրը կեդրոնէն դուրս ելլէ , ընդէ . ժողովին չը արդի ընտրութեան վաւերացումը , ես կը պարտաւորվիմ պատրիարքութեան հրամարելու : Ուստի հեշտին եզանակ մը կ'առաջարկեմ . ընդէ . ժողովն իր մէջէն խառն յանձնախումբ մը կարգէ , որոյ պաշտօնն ըլլայ ընտրական հրահանգները պատրաստել , գործադրել տալ , եւ գործողութեանց արդիւնքը տեղեկագրով մը բերել ընդէ . ժողովին վաւերացմանը ներկայացնել :

Ահա այս է իմ վերջին խօսքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ըստ Սահմանադրութեան ամեն խնդիր ձայնից առաւելութեամբ պիտի որոշվի . ընտրութեան խնդիրը բաւական ծեծվելէ ետքը՝ նախընթաց նիստին մէջ թեւականաց արվեցաւ , կը մնայ հիմա վաւերացման մասը : Ասոր լրաց երկու առաջարկութիւն կայ , մէկը վաւերացումը ընդէ . ժողովին կու տայ եւ միւրը Խառն խորհուրդին . ուստի այս երկու առաջարկութիւնները քուէի կը գնեմ :

ԱՐԵԱԿ ՅԱԿՈԲ ԷՖ . Սրբազան նախագահը սպառնալիք ըրաւ եւ քուէարկութիւնը ճնշման ներքեւ պիտի կատարվի . չ'ենք կրնար ընդունիլ անոր օրինաւորութիւնը :

Տ . ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿ . — Դուք ամեն բան խօսելու ազատութիւնը կը վայելէք , իսկ երբ Ս . Պատրիարքը բան մը խօսի , իսկոյն սպառնալիք կ'ըլլայ ձեզի :

ՄԱԶԱՐԱՄԵԱՆ ԷՖ . — Խնդիրին մէջ սպառնալիք մտաւ . ասիկայ նոր եւ յանկարծակի պայման մըն է , զոր պէտք է քննենք ու խորհինք . առանց քննութեան ժամանակ տալու անմիջապէս քուէարկութիւնը սպորինաւոր է . երբէք չ'ենք ընդունիր . պէտք է խօսինք նախ ասոր վրայ , կամ չէ՛նէ Պատրիարքը հրամարական բառը եւ թող առնէ քուէարկութեանն առաջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Կը կրկնեմ խօսք չ'ու-

նիք , բողոքնիդ թող արձանագրովի : ( Շատ մը ձայներ մէկ կողմէն եւ միւս կողմէն իրարու դէմ բողոքեցին : )

Ատենապետ էֆէնտին երկու առաջարկութիւնները զատ զատ քուէի գրնելով , ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունվի որ ընդէ . ժողովը կատարէ կաթողիկոսաց ընտրութեան վաւերացումը , ( 2 բողոքող եւ 1 քուէի դէմ : ) իսկ Արշակ եւ Մաղլըմեան էֆէնտիները նոյն իսկ առանց հակառակ քուէ տալու բողոքեցին , պրնդելով թէ քանի որ նախ Ս . Նախագահը իր հրամարման սպառնալիքը յետոյ չը կուտայ , որով վաւերացման խնդիրը կարելի ըլլար ազատօրէն եւ օրինաւորապէս քուէարկութեան ենթարկել , իրենց համար ապօրինաւոր է , եւ խնդրեցին որ երբ իրենց բողոքն անդաւլի մնայ , գէթ ճշգրտարձանագրովի ու մնայ սպառնալիքն առջեւ :

Ս . ՆԱԽԱԳԱԸ . — Իմ խօսքս ումանց կողմէ իրը սպառնալիք մը նկատվեցաւ , բայց ես ըստ սպառնալիք չ'ըրի երբէք , այլ յայտնեցի ինչ որ իմ ազատ կամքս եւ իմ գիտակցութիւնս էր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խառն խորհուրդը ընտրութեան հրահանգը պատրաստելով պիտի զըրկէ գործադրութեան . վարչութիւնը ընտրութեան տեղեկագիրն ստանալէ ետքը՝ իւր մասնաւոր տեղեկագրին հետ գործողութեան արդիւնքը պիտի բերէ ընդէ . ժողովին վաւերացմանը : Կը մնայ հիմա յարաբերութեանց խնդիրը որ ընտրութեանց վաւերացումէն առաջ յանձնախումբի մը ձեռօք ի քնին պիտի առնվի ըստ առաջարկութեան Ռուսիոնեան էֆէնտիի :

Ատենապետ էֆէնտին այս խնդիրն ալ քուէի գրաւ եւ ընդհանուր հաւանութեամբ որոշվեցաւ՝ որ կանխաւ յարաբերութիւնները որոշվին . հետեւապէս Դիւանն իր կողմէն առաջարկեց որ յարաբերութեանց յանձնախումբի անդամ կարգվին :

ԵԿԵՆՅԱՆ ՊԱՍԵՆ

- Տ . Երեմիա Եպիսկոպոս
- Տ . Մելքիսեդեկ վարդապետ
- Տ . Յովհաննէս քահանայ Մկրեան :

ԱՇՈՒՐԱՅԱՆ ՊԱՍԵՆ

- Իւթիւճեան Կարապետ էֆէնտի
- Փախազեան Ստեփան » »
- Տօքթէօն Իւթիւճեան » »

Տ . ԱՐԲՈՍԻՈՍ ՎԱՐԴ . — Կ'առաջարկեմ որ մասնախումբին անդամոց ընտրութիւնը գաղտնի քուէով կատարվի :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ . — Կը խնդրեմ Դիւանէն որ իմ անունս որբէ ներկայացված ցուցակին

մէջէն , եւ տեղս Ռուսիոնեան էֆէնտին գնէ :

ՄԱԶԱՐԱՄԵԱՆ Յ . ԷՖ . — Յարաբերութեանց խնդրոյն վրայ խօսք ուղեցի բայց չը արվեցաւ , եւ գիւանը քուէի գրաւ զայն առանց վիճարանութեան ենթարկելու . աս ալ անկասկածութիւն մըն է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏ . ԷՖ . — Յարաբերութեանց խնդիրն անցեալ շաբթու յուղվեցաւ եւ Մաղլըմեան էֆէնտին կրնար խօսիլ :

ԻԿԻՏՊԱՇԵԱՆ ԱՍԱՊԱ ԷՖ . — Եթէ գիւանն արդէն որոշված խնդրոյ մը վրայ խօսելու թողտուութիւն ընէ , ատենական կանոնաց դէմ կը մեղանչէ եւ կը պարտաւորէ զմեզ բողոք բանաւալու :

Տ . ՄԵԼՔԻՍԵՆԵԿ ՎԱՐԴ . — Կ'աղաչեմ որ իմ անունս վերցվի մասնախումբի անդամոց ցանկին մէջէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Որովհետեւ ամեն ոք կը հրամարի , կը խնդրեմ որ իմ անունս ցանկին մէջ մնայ եւ ես պատրաստ եմ մասնախումբին անդամակցութիւնն ընդունելու երբ ընդէ . ժողովն ընտրէ , միայն թէ գիւանը պէտք է մասնախումբին պաշտօնը բացատրէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Յանձնախումբը յատուկ պաշտօն ունի էջմիածնայ Հայրապետի , Պատրիարքի , Սոյ եւ Աղթամարաց կաթողիկոսութեանց իրարու հետ ունենալիք փոխադարձ յարաբերութեանց սահմանը ծրագրել եւ ընդէ . ժողովոյ ներկայացնել , իսկ եթէ ասոր հետ Կիլիկիոյ կաթողիկոսարանին բարեկարգութեանց վերաբերեալ կանոններ ալ բերէ մեզի , ընդէ . ժողովը շնորհակալ կ'ըլլայ , վասն զի գործը աւելի եւ իսկապէս օգտաբեր կ'ըլլայ ազգին : ( Ատենապետ էֆէնտին յանձնախումբին ան-

դամակցութեան համար գիւանին կողմէն ներկայացեալ ընտրելաց ցուցակը քուէի գրաւ եւ մեծագոյն մասամբ ընդունվելով յարաբերութեանց յանձնախումբը կազմեցաւ : )

ԱՐԵԱԿ ՅԱԿՈԲ ԷՖ . — Պէտք էր որ այդ ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ կատարվեր :

ՍՐՎԱՃԵԱՆ ՅԱՐ . ԷՖ . — Երբ ժողովի մէջ խնդիր մը յայտնի քուէարկութեան կ'ենթարկվի , գաղտնի քուէ ուղղուները կը պարտաւորին իրենց կամքը կանխաւ յայտնել , Հիմա որ յանձնախումբը կազմեալ է , գաղտնի քուէ պահանջելը յանձնախումբին անդամոց արժանիքը կասկածի ներքեւ թողուլ է եւ զանոնք թշնամանել , զոր ոչ ոք իրաւունք ունի ընելու :

Տ . ՅՈՎՃ . ՄԿՐԵԱՆ . — Իբրեւ ընտրեալներէն մէկը կ'առաջարկեմ որ գաղտնի քուէարկութեամբ ըլլայ այդ ընտրութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Պէտք է որ այդ առաջարկութիւնները խնդիրը քուէի չը դրված մէջ բերվէին :


ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ . — Յանձնախումբը ամբողջ հրամարական տալու է որ այնուհետեւ գաղտնի քուէարկութեան առաջարկութիւն ըլլայ :

ԱՐԵԱԿ Յ . ԷՖ . — ( Ատենապետին ուղղելով խօսքը ) , Գաղտնի ակնարկութիւն մ'ըրիք մեր վրայ կ'աղաչեմ բացատրութիւն տաք ասոր վրայ : ( Ատենապետ էֆէնտին ժողովին կամքը հարցնելով իմացուց որ յառաջիկայ ուրբաթ նոյն ժամուն պիտի գումարով ժողովը եւ նիստը վերցուց ժամը 10 ին : )

ՓՈՒԱՏԵՆԱՊԵՏ	ԱՏԵՆԱՊԵՆ
Ս . ԱՂԱՄԵՅԱՆ	ՌՊՈՒՆԵՅԵ



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs across the page.



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւ անատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,  
եւ կը գտովի ամեն գրավաճառաց քով եւ Եկեղեցեաց բանկալները :